# ՏԵՂԵԿԱՆՔ

**Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ**

**Իրավական ակտի նախագծի անվանում**

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

**Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութուն

**Իրավական ակտի տեսակ**

Օրենք

**Ոլորտ**

Սոցիալական ապահովություն

**Հանրային քննարկման ժամկետ**

25/02/2020 - 11/03/2020

**Ստացված առաջարկների արդյունքներ**

Ստացվել է 3 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 3 առաջարկ

**Քվեարկության արդյունքներ**

7 կողմ

1 դեմ

**Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից**

**11/03/2020**

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| h/h | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «Լռության ձայն» լսողության խնդիրներ ունեցող շահերի պաշտպանության հասարակական կազմակերպություն<br>11.03.2020 17:12:46 | Արդյո՞ք ամբողջությամբ է փոխվելու վիճակագրական պատկերը, Փյունիկ շտեմարանը փոփոխություն է կրելու ԱՖԳ ներդրումից հետո: | «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օրենքի դրույթները չեն տարածվում անժամկետ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվածների վրա, եթե վերջիններս նման ցանկություն չեն հայտնել: Միաժամանակ, 2020թ. հունվարի 1- դրությամբ «Փյունիկ» տեղեկատվական համակարգում հաշվառված են 192013 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից 151176 անժամկետ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | հաշմանդամություն ունեցող անձ չի ենթարկվելու ֆունկցիոնալ գնահատման, նրանց մասով տեղեկատվական համակարգում փոփոխություններ չեն դիտվի: Դինամիկայում, կրկնակի և առաջնակի գնահատված անձանց մասով տեղեկատվական համակարգ կմուտքագրվեն տվյալներ՝ նրանց նոր կարգավիճակի վերաբերյալ : | |
| 2 | Karen Abrahamyan<br><br>28.02.2020 14:34:18 | Նախագծով նախատեսվում է հաշմանդամության խմբերի փոխարեն (1-ին, 2-րդ, 3-րդ խումբ և հաշմանդամ երեխա), սահմանել անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը՝ թեթև, միջին, ծանր, խորը:Et depqum inchpesen mek ayl socialakan ajakcutyun stanalis(aseng Paros) hashvarkvelu hashmandamutyan xmberin trvox miavorner@? Menq giteng,vor nranc miavorner@ anapahovutyan gnahatman jamanak bardzre linum. | Օրենքի ընդունումից հետո, կմշակվի օրենքի կիրառումը ապահովող իրավական ակտ, որում կներառվեն նաև համապատասխան օրինագծեր, համապատասխան փոփոխություններով: | |
| 3 | Մերի Սահակյան<br><br>27.02.2020 00:10:31 | «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածում տրված է «հաշմանդամություն | Դրույթը լրացվել է շահագրգիռ գերատեսչությունների դիտարկումների հիման վրա՝ | |

| | | | |
|---|---|---|---|
| | ունեցող անձ» հասկացությունը, այն է" «անձ, որը ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական տևական խնդիրների և տարբեր արգելքների փոխազդեցության արդյունքում կարող է ունենալ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցության սահմանափակում» : Այս բնորոշումից հստակ երևում է, որ անձ հասկացությունը ընդհանրական է և ներառում է նաև երեխաներին, մինչդեռ նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասում «հաշմանդամություն ունեցող երեխա» հասկացությունը անհարկի առանձնացվում է «հաշմանդամություն ունեցող անձ» հասկացությունից, այնինչ վերջինս արդեն իսկ ներառում է «հաշմանդամություն ունեցող երեխա» հասկացությունը: | տարընթերցումներից խուսափելու համար: | |